ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի մարտի 1-ի թիվ 5 որոշմամբ և հրապարակվում է
“Գնումների մասին” ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/6»

Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար **«Ուղեհարթիչ (ավտոգրեյդեր)»-ի** ձեռքբերման նպատակով կազմակերպված ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է հրավերի վերաբերյալ 2024 թվականի փետրվարի 29-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2024 թվականի մարտի 1-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1 Հարգելի Գործընկեր. Համաձայն տեխնիկական բնութագրի պահանջների, ուղեհարթիչի հարթաշերեփի բարձրությունը պահանջվում է ոչ պակաս, քան 635մմ: Մեր կողմից առաջարկվող ուղեհարթիչների հարթաշերեփի բարձրությունը կազմում է 610մմ, ինչը ընդամենը 2,5սմ-ով պակաս է պահանջվող բարձրությունից: Հաշվի առնելով, որ վերոնշյալ տարբերությունը բացարձակ ոչ էական է, քանի որ ոչ մի էական ազդեցություն չի կարող ունենալ ուղեհարթիչի արդյունավետ աշխատանքի կամ ֆունկցիոնալության վրա, բայց մեր մասնակցությունը հնարավորություն կտա Ձեզ ապահովել մրցակցություն և խնայել ֆինանսական միջոցներ՝ առանց վնասելու գնման առարկայի որակին, ուստի խնդրում եմ պարզաբանել՝ ընդունելի է արդյոք մեր կողմից առաջարկվող ուղեհարթիչի 610մմ բարձրությունը, հակառակ դեպքում խնդրում եմ հիմնավորել նման չնչին տարբերության անընդունելի լինելը:

Պարզաբանում N 1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 32-րդ կետի 22-րդ ենթակետի պահանջներով,ինչպես նաև «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/6» ծածկագրով հրավերի 3.3 կետով՝ Ձեր կողմից ներկայացված հարցադրման վերաբերյալ հայտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը տվյալ փուլում համարժեքության հարց չի քննարկում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԾՔ-ԷԱՃԱՊՁԲ-24/6» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա.Ավետիսյանին:
Հեռախոս՝ 060680132:
Էլեկտրանային փոստ՝ tsaghkadzor.tender@mail.ru: